

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 բուրդի կէս տարվան 6 բուր.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյալ խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Маск».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տոն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«Կվալի»-ի խմբագրութիւնը սրանով յայտնում է իր ընթերցողներին եւ աշխատակիցներին

ԳԵՕՐԳԻ ԵՖԻՄԻՉ ԾԵՐԵԹԵԼԻԻ

մահվան մասին: Հոգեհանգիստը նշանակված է ամեն օր, ցերեկվայ 12 ժամին եւ երեկոյան 7 ժամին «Կվալի»-ի խմբագրատան մէջ (Արտիէրիկայա, № 5):

Անաստասիա Միխայլովնա Թումանովա-Մէրէթէլի, երեսն եւ Ակակի Մէրէթէլիները խորին վշտով յայտնում են ազգականներին եւ ծանօթներին առաջինը՝ իր թանգազին ամուսնու, իսկ երկրորդները իրանց անմոռանալի հօր՝

ԳԵՕՐԳԻ ԵՖԻՄԻՉ ԾԵՐԵԹԵԼԻԻ

մահվան մասին: Ամբիճը կը կատարվի ամեն օր ցերեկվայ 12 ժամին եւ երեկոյան 7 ժամին: Գեղարկաւորութիւնը տեղի կունենայ կիրակի օր, յունվարի 16-ին, (իր սեփական սանից Արտ. փ., № 5) դէպի Քաջկէթի եկեղեցին եւ այնտեղից Դիզուբէի գերեզմանատունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն նոր հիմնարկութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Գլխաւոր կաթիլատի նիւստը. Երկրաշարժից վնասվածների օգտին. Նամակ Ախալքալաքից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Եւրօպական մտքից եւ գրականութիւնից:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՆՈՐ ՀԻՄՆԱԿՈՒԹԻՒՆ

Ներկայ 1900 թուականին Ռուսաստանի բարձրագոյն պետական հաստատութեան մէջ կատարվեց մի բարեփոխութիւն, այն է պետական խորհրդի մէջ բացվեց մի յատուկ բաժին, որ պէտք է ընէ զիտութեան արդիւնազօրութեան եւ առեւտրի զարգացման վերաբերեալ խնդիրները: Պետական խորհուրդն եւ առաջ ընտելութեան էր առնում այդ խնդիրները, բայց կարեւորութիւն էր զգուշացնում իր բաժին ունենալու նրանց համար: Սակայն ժողովրդական կրթութեան բազմապատկ հարցերը, լայնարձակ կերպով քննարկութիւն տարածելու անհրաժեշտութիւնը,

արդիւնազօրութեան զարգացման լուսաւոր եւ մեծ երեւոյթները, առեւտրի նոր պահանջները թելադրեցին յատուկ անձինք եւ հիմնարկութիւն ունենալու, որոնք մասնագիտապէս զբաղվէին Ռուսաստանի նոր կենսի այդ կարեւոր եւ հիմնական հարցերի ընտելութեամբ եւ նրանց զարգացման նպատակալարմար միջոցների մշակութեամբ:

Ով հետեւել է մայրաքաղաքի շրջանների մէջ տիրող տրամադրութեան՝ նա գիտէ, որ ցանկութիւն կայ մտցնել դարձեալ մի բարեփոխութիւն, այն է լիազօրութիւն տալ պետական խորհրդի անդամներին, որ նրանք իրաւունք ունենան օրէնսդրական նոր հարցեր յարուցանել: Մինչեւ այժմ օրէնսդրական ծրագիրները առաջարկում էին մինիստրները, եւ նրանցից էր կալված առաջ տանել այս կամ այն կենսական հարցը: Իսկ երբ կը լայնացվի այդ իրաւունքը եւ պետական խորհրդի անդամներն էլ կը սկսեն իրանց նախաձեռնութեամբ ընտելութեան ենթարկել նոր օրէնսդրական հարցեր՝ այն ժամանակ թէ՛ առհասարակ կը զարգանայ օրէնսդրական գործունէութեան շրջանը եւ թէ՛ առանձին մինիստրութիւնները աւելի արագ առաջ կը տա-

նեն զանազան հարցեր, որոնք որեւէ պատճառով կանգ են առել կամ յետաձգվել են:

Նոր զեպարտամենտների հիմնելը բոլորին համապատասխան է պետութեան ժամանակակից պահանջներին եւ անկասկած նա առաջ կը բերէ բարեբար արդիւններ: Գիտութեան եւ արդիւնազօրութեան զարգացման վերաբերեալ խնդիրները երկար ժամանակ ապաստում էին հեղինակաւոր պաշտպանութեան եւ բարձր հոգեւորութեան Անկասկած, նոր զեպարտամենտ հաստատելու միտքը, լինելով հետեւանք մի բնական պահանջի, որ զգացվում է պետութեան մէջ՝ կոչված է կատարելու էական դեր կրթութեան եւ արդիւնազօրութեան զարգացման կարեւոր հարցի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Վերջապէս, Ախալքալաքի գաւառի աղէտը արձագանգ տուեց մայրաքաղաքի մամուլի գոնէ մի մասի, եւ պէտք է ասել, անշուշտ մասի մէջ: Մեծ մասը բաւականացաւ Թիֆլիսի թերթներէն արտատպութիւններ անելով. կային այնպիսիները, որոնք այդ էլ զայցան, եւ միայն մի կամ երկու հատ լրագիրներ խօսեցին այն մասին, որ արեւմտեաններն հաբկաւոր է օգնութիւն հասցնել: Մինչեւ այժմ այդ օգնութեան հրաւերն էլ մի շօշափելի գործ չէ առաջացրել եւ «НОВОСТИ» լրագրի ֆելետոններէն մէկը այդ անտարբերութիւնը մի առիթ է դարձնում հասարակութիւնը խիստ ծաղրելու համար:

Կովկասում տեղի ունեցաւ երկրաշարժ: Հարիւրաւոր եւ հարիւրաւոր դիակներ, ալյանադակված, կտրուած ձեռքերով եւ վարդավազաններով, հանգում են աւերակների տակից: Յարկից, օգնութիւնից, կիրակից զրկված վերադարձող հեծեռներ են եւ օգնութիւն են խնդրում իսկ մեք... Մեզ այն աստիճան կանկել է յանկարծակի ծնված սէրը զէպի բռնիները եւ վաղուց, յայտնի չէ թէ ինչ պատճառով գոյութիւն ունեցող ամուսնութիւնը զէպի անդիւնացիները, որ չենք ուզում ոչինչ իմանալ, լսել Մեզ թող տեղեկութիւններ տան բռնիների նոր յարթութիւնների մասին, իսկ յետոյ—թող Ռուսաստանը թէկուզ կորչի, թող թէկուզ ամբողջ ժողո-

վորդը կտորվի—մեզ համար միեւնոյն է: —Դարձեալ կովկասեան դժբախտութիւնների մասին, բացառանում է անբաւական ընթերցողը, բաց անկող լրագիրը:

—Եւ ինչպէս չեն ձանձրանում Միւսնոյն, միշտ միեւնոյնը: Դէ, էլի քան զիսկ հանեցին: Եւ միթէ ամեն մի հանված դիակի մասին պէտք է գրել: Այնքան ձանձրալի է: Գրեցին մի անգամ, եւ բաւական է: Բայց չէ. ամեն մի համարի մէջ, ամեն մի համարի...:

Երեւոյթի պատճառը բաւական վերաւորական է «մարդ» հասկացողութեան տեսակէտից, եւ ֆելետոնիստն էլ չէնց այդ հանգամանքն է ընդգծում: Դա մարդկային ցեղի մի ընդհանուր պակասութիւն է: Ամենից առաջ, ի հարկէ, դեր է կատարում դժբախտութեան տեղի հետաւորութիւնը: Իր ժամանակի հասկացողութիւնները անողորմ կերպով ծաղրող վօլտէրը ասում է, որ եթէ Եւրոպայում իմանային թէ եթէ մատչելի չարժեք Չինաստանում մի մարդու գլուխ կը թույլի ոչ ոք չէր զրկի իրան այդ հանգիցից: Հետո է մարդը, հետո, անմասն, նոյն-իսկ անհասկանալի են նրա տանջանքները, նրա ամբողջ դժբախտութիւնը: Յետոյ գալիս է եռական հանգամանքը. Դուք ուզում էիք գնալ երկրպագող մի տեղ, բայց անյետաձգելի գործ պատահեց եւ դուք մնացիք. միւս օրը իմանում էք, որ այն գնացքը, որի մէջ դուք պիտի լինէիք՝ խորտակվել է, ջարդել ճանապարհորդներին: Եւ առաջին զգացմունքը, որ ձեզ պաշտում է՝ ցաւակցութիւնը չէ զէպի գոնիցը, այլ այն կատարեալ բաւականութիւնը, որ դուք յետաձգեցիք ձեր գնալը, թէ չէ ինքներդ էլ գոնիք մէջ կը լինէիք: Այսպէս եւ երկրաշարժը. խոստովանեցէ, որ ձեզանից շատերը, կարգաւոր նկարագրութիւններ լրագիր մէջ, գուցէ եւ սարսափում էք այդ դժբախտութիւնից, գուցէ եւ ցաւում էք, բայց միեւնոյն ժամանակ դուք զգում էք ապահովութիւն ձեր անձի վերաբերմամբ. դեռեք որ երկրաշարժը ձեր բնակված տեղում չէ եղել, եւ ուրեմն այնքան էլ ձեզ չը պէտք է անհանգստանալ: Ուրիշ դժբախտութիւնը սեփական դժբախտութիւն համարել—ան ինչն է պակասում մարդուն, անա ինչու մեր կօպէկները այնքան դժուարութեամբ են դուրս գալիս՝ դժբախտներին օգնելու համար: Եւ ասկայն Ռուսաստանի ժողովուրդը իր առաջ մեծ օրինակ ունէր իմանալու, թէ ինչպէս պէտք է վերաբերվել ժողովրդական աղէտին: Դասի

սկզբունքներ, որոնք մինչեւ իսկ բնագիտ. բեւաբանութիւն էին ստացել:

XVIII դարը ներկայանում է իրրեւ հին հելլենիստական եւ քրիստոնէական ոգու միութեան դարը. վերածնութեան բոլոր իդէալները համարեա այս դարումը միայն իրականացան: Այս իդէալների հետաւոր եւ ամենախոյզը վերջնակէտը ֆրանսիական յեղափոխութիւնն էր, որ երրորդ դասակարգին հասարակական-իրաւաւորական մի անընթեքի դիրք ընծայեց եւ առհասարակ պետական եւ սոցիալական զարգացման նոր հորիզոններ ստեղծեց:

XVIII դարը միտքը եւ զգացմունքը մի առաջնական զարգացրեց. միմեանցից բոլորովին տարբեր հոգեկան այս երկու գործոնները որքան անգիտակցաբար են երեսն գալիս, որքան մոտենում են բնագիտ. նոյնքան հեղինակաւոր եւ տիրական են դառնում, անպայման հնազանդութիւն են պահանջում եւ ոչ մի զիմադրութիւն չեն ուզում ընդունել: Այն, ինչ որ մենք զգում ենք, այն, ինչ որ մեզ «խելացի» է թւում՝ դառնում է մեզ համար անխորտակելի, ճշմարիտ եւ յաւիտեական: Սրանից պարզ հետեւում է, որ միտքը եւ զգացմունքը անհրաժեշտօրէն պէտք է զէմ առ զէմ զարտ գալին, պէտք է պայքարի ընդմիջին եւ աշխատել միմեանց փոխադարձ խորտակել: Զգացմունքը, որ ոչ մի ապացոյցի կարօտ չէ. բնականութիւնը, որ ամեն ինչ ապացոյցել է ուղղում, զգացմունքը հանգիստ եւ ինքնակազմ, բնականութիւնը միշտ անհանգիստ, բացասող

Преполов. ведется по собоств. сочинениям.

109486

այսպէս էլ

մար շատ

անց

պահանջ

ներքին վր

նոյն, որ

իրում ենք

Магасум

10

27,

բարձրութիւնից ցոյց տրված չնոր՝ այդ օրի-
նակն էւ կայսերական առատաձեւութիւնը մի
մեծ նշան էր, որ երկրաշարժից վնասվածները
կարօտ են կարեկցութեան. եւ սակայն որ
հարուստը կարողացաւ հասկանալ իր պարտա-
ւորութիւնը: Եւ միթէ իրաւունք չունի հա-
սարակական ընթացիկ բարքերից անբաւական
հրապարակաօրէն իր դաւն ծաղրը չարտել ան-
տարբերներէ, եսամոլներէ անզգայ գէտներէն...

Ով ինչի մասին ուզում է մտածէ, էջմիած-
նի զիպլոմաւոր, արտասահմանեան աստուա-
ծարանները միմիայն այն երազի վրա են, որ
իրանց «մասնագիտութիւնը» ժողովրդականա-
նայ մեր օրերուն «Արարատի» հոկտեմբեր եւ
նոյեմբեր ամսատետրը այժմ է միայն լոյս տե-
նում, եւ սակայն աստուածաբանութիւնը կան-
չում է այդտեղից, թէ ինքն է միակ փրկու-
թիւնը: Տեսէք բանը ինչին է հասել: Կ. Պօլսի
մի ուսումնական քահանայ, ասում է «Արա-
րատը»:

Խրատ է կարդում մեզ Կ. Պօլսի մի թեր-
թի էջերից համոզել ձեռնարանաւարներին,
որ աստուածաբանութիւն ուսանելու չի-
թան, այլ երթան բժշկութիւն սովորելու՝ դան
գիւղերում օգտակար գործունէութիւն ցոյց
տան...

Խելօք, ժամանակակից, օգտակար խրատ
է, չէ՞: Բայց եթէ լսելու լինեն այդ խրատը,
այն ժամանակ ուր տանեն աստուածաբանա-
կան զիպլոմները, որոնք այժմեան ժամանակ
այնքան ձեռնառու են եւ նոյն-իսկ հացաւէտ
եւ անա աստուածաբանների օրգանը կայծակ-
ներ է թափում Կ. Պօլսի բանիմաց եւ հասկա-
ցող քահանայի գլխին:

Իսկ ինչո՞ւ ոչ աստուածաբանութիւն. պա-
տասխանը պատրաստ է միշտ. որովհետեւ
ամեն մի քրիստոնէայ, որ աւետարանը կար-
դում հասկանում է աստուածաբան է ըստ
ինքեան: Շատ ենք հետաքրքրվել իմանալու,
թէ որտեղ են մեր երկրում այդ պարզ քրի-
ստոնեաները, որոնք աւետարանը կարդում
հասկանում են. քրիստոնէաներ չափաք-
նորտեղ են այն քահանաները եւ աւելի բար-
ձր կարգի հոգևորականները, որոնք կանգ
չեն առնի աւետարանից բերած (Պօղոս ա-
ռաքեալ եւ մարգարէներ մի կողմ մնան) ա-
մենապարզ մի հարցի դէմ: Սակայն ինչ
հարկաւոր է մեր ժամանակակից սերունդին
այդպիսի հոգեւոր վերաբերել, հարցերի պա-
տասխանը. մարմին բժշկիլ—այդ հարկաւոր
է. իսկ հոգին—ինչ ուզում է թող լինի. հո-
գին ո՞վ է տեսնում, որ նրա մասին մտածէ:

Դուրս է գալիս, որ հոգի փրկելու համար
պէտք է մտնել միջնադարեան սիստատիկայի
անդունդները, դանազան եւտիքաների, Լե-
ւոնների, Մակեդոնների վէճերը, տրամաբա-
նութիւնները կրանք: Եթէ չը կայ աւետարան
կարգացող եւ հասկացող քրիստոնէայ, պէտք
է ուրեմն բարձր աստուածաբանութիւնը
զարգացնել, այն «գիտութիւնը», որ միայն
միջնադարում, իսկում է աւետարանական հաս-
կացողութիւնները: Սակայն էջմիածնի աս-
տուածաբանները իրանց խոյրերի հանգստու-
թեան մէջ մեր բարեբախտութեան մասին են

եւ քայքայող՝ անն երկու անհաշտ ոտիները:
Բանականութիւնը իր յարձակողական եւ քնն-
նադատական բնաւորութեան չնոր՝ իսպ-
թոցն ուղղում է իր սկիական զգացմունքի
դէմ եւ ժխտում, բացառում է նրան. իսկ
զգացմունքը որքան մօտ է ընդգրկի՝ նոյնքան
ուժեղ է ննթարկվում այս խայթոցին, նոյն-
քան անպաշտպան է եւ անօր. որովհետեւ
ընդգրկող—զգացմունքն ուրիշ բան չէ՝ բայց եթէ
բարոյական քառ. այն—ինչ բանականութիւնը
պահանջում է կարգ, կանոն, լոյս, ապացոյց...

Եւ մենք ինչ ենք տեսնում. XVIII դարը
մարդասիրութեան, համբերողութեան (Tol-
eranz) եւ եղբայրական սիրոյ դարն էր, Բուս-
սոյի եւ Կանտի, Շելլերի եւ Գէթեի դարը.
բայց այս դարի վնձ սկզբունքները, գեղե-
ցիկ իդէալները դեռ վերացական էին, իրա-
կանութեան հողից դուրի, մշուշապատ:
Այնպէս որ հենց նոյն դարի մեծ իդէա-
լիստները մէկը, Շելլերը, XIX դարի չնաբեւ
1800-ի յունվարին հետեւեալ յուսահատական
տողներն էր գրում. «Ողորդութիւն ու ազա-
տութիւնը ուր են գտնվում իրանց ապաստա-
նարանը. հին դարից փոթորիկով ենք բաժան-
վում եւ նորը մահվան ստուերներով է մեզ
բաց անում իր դուռը... ազատութիւնը միայն
երազների աշխարհում եւ գեղեցիկը միայն եր-
գերի մէջ է մնում որոնել»:

Յիշատակական յեղափոխութիւնը վերածնու-
թեան եւ մանաւանդ յետագայ դարերի իդէալ-
ները ամբողջովին չիրականացրեց, եւ այս
դեռ բաւական չէ. արեւմտեան յուզումներով լի
պատմական այս մեծ դէպքին յաջորդում է մի

մտածում: Նոր ժամանակի հոսանքների առաջ
վանականութիւնը կուրծ է ծեծում անա ինչ
խօսքերով:

Ինչ է մի քանի բողոքական պատերազմի
բարոյութիւնը այն անապին հոսանքի մօտ,
որ հազար զոհերով ներս է խուժում մեր
երկրի՝ գիտութեան, լուսաւորութեան, քա-
ղաքակրթութեան այլ եւ այլ փայլուն ա-
նունքներով չլցնում թէ ուսումնականի, թէ
յետին տգէտ շինականի աչքը իւր «կեր»,
մըր եւ ուրախ լիք» նշանաբանը թաղապա-
րել տալու ամեն տեղ: Հարկաւոր չէ մի ճշը-
մարիտ, մի հոգեւոր մի աւետարանական
լուսով առաջնորդող գիտութիւն, որ մա-
քաւէ այդ կեղծ գիտութեան բարոյաբնե-
րի դէմ:

Օն ուրեմն, քաջեր, բիրաւոր աստուա-
ծաբանական զիպլոմներ ձեռք բերէք, թէ չէ
ձեռքից գնում է աշխարհը... «Ճշմարիտ գի-
տութիւն»—ան, երբ պիտի դուրս գաս էջ-
միածնի պատերից, ով Մեսիա Մարդկանց
համբերութիւնը հասնելու վրա է. երբ պիտի
խղճաս դժբախտներին...

ԳԼԽԱՒՈՐ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

Բժիշկ Կիկոճէ, որ նոր վերադարձել էր Ա-
խալքալաքի գաւառից, զեկուցեց հետեւեալը:
Հասնելով յունվարի 5-ին Ախալքալաք՝ բժիշկ
առաջին դարձը եղաւ ծանօթանալ քաղաքում
հիմնված հիւանդանոցների հետ: Մի համեմա-
տարար մեծ հիւանդանոց, բաղկացած վեց սե-
նակից, նշանակված է վիրաւորվածների, ջարդ-
վածների եւ հասարակ հիւանդների համար:
Այդ հիւանդանոցում կան 54 անձ, որոնցից մի
մասը հիւանդներ են, միւս մասը հիւանդապահ-
ներ են: Միւս հիւանդանոցում, բաղկացած
չորս սենակից, կան 4 անձ, որոնք հիւանդ են
ծաղկով: Երրորդ հիւանդանոցում, բաղկացած
նոյնպէս չորս սենակից՝ 15 անձ, որոնք հիւանդ
են քոսով: Հիւանդանոցը մեծ կարիք ունի թէ
անկողնի եւ թէ ձեռնակեղնի, որոնց մասին
անհրաժեշտ է հոգաւարութիւն: Տեղական կո-
միտէի նիստում Կիկոճէ յայտնել է, որ հար-
կաւոր է վարակիչ հիւանդանոցը կղզիացնել եւ
նրան երկու մասի բաժանել, մէկը ծաղկով հի-
ւանդների համար, միւսը ուրիշ վարակիչ հի-
ւանդների համար: Ախալքալաքում հիմնված է
եւ ձրի ճաշարան: Հիւանդանոցների վրա հըս-
կել է մինչեւ ա. ժ. բժիշկ Ուսպենսկի, որ իր
եռանդուն եւ անձնուէր գործունէութեան շը-
նորհիւ գրաւել է բոլոր հիւանդների սիրտը.
լինելով մօտ ծանօթ տեղական պայմաններին՝
բժիշկ Ուսպենսկի միեւնոյն ժամանակ շատ օգ-
տաւէտ անգամ է եղել տեղական կոմիտէում:
Բայց նա ստացել է նոր պաշտօն եւ պէտք է
թողնէ Ախալքալաքը՝ Նրա հետնալը մեծ վիշտ
էր պատճառէ հիւանդներին, որոնք սիրում են
նրան անկեղծ կերպով: Հիւանդներին խնամե-
լու եւ նրանց միջնորդելու գործում աչքի է
ընկնում գաւառապետի ամուսնու, տիկին Չի-
սերմանի հազուադէպ գործունէութիւնը: Թէ
Ախալքալաքում եւ թէ գաւառում գործելու
համար անհրաժեշտ է ունենալ եւ մի ուրիշ

ուժեղ հակաշարժում—մեծ Կօրեկայցին 10 տա-
րուց աւելի տիրում է համարեա ամբողջ Եւ-
րոպային եւ ոչ միայն պետութիւնների, այլ եւ
ազգերի ձակարակներ երկաթէ հզօր բուռնը-
ներով կաշկանդում:

Հիւսիսայինութեան ողորդ հետզհետէ աւելի է
ծաւալվում. իդէալը եւ իրականութիւնը, կեան-
քը եւ արուեստը, խոր անդունդներով բաժան-
վում են միմեանցից: Եւ անա առաջ է գալիս
տանջվող եւ հիւանդոտ. իդէալիստների մի
շարք—բոմանտիկները, որոնք իրականութեան
եւ իդէալի մէջ եղած ուժեղ հակասութեան
ճնշման տակ իրանց միջնորդութիւնը անցեա-
լում, երազների աշխարհում էին փնտռում:
Գէթեի «Werther»-ը այս զգայնութեան եւ
հիւանդոտ իդէալիզմի ամենաապրական ար-
տաւայանութիւնն է: Նուրը, կանացի եւ քնքոյ
«Էլիզաբեթականութեան» յաջորդում է «բայր-
նականութիւնը», որը աւելի առնական բնա-
ւորութիւն է կրում, մաքի եւ կամքի ոյժով
է փայլում. փոխանակ արտասուքի, ռդրի եւ
հեծեծանքների՝ անէճքի, զայրոյթի եւ հեգնու-
թեան շանթեր է արձակում: Իրրեւ բուն վեր-
թերական միջնորդի պտուղներ՝ յիշատակու-
թեան արժանի են Ալֆրէդ դը Միւսսէ եւ մա-
նաւանդ Լէօպոլդի, յոռետեսութեան այս ամե-
նախոր եւ մոայլ եղբիւր:

Բայց բոմանտիկների ազդեցութիւնը հետըզ-
հետէ նստեցնում էր. «Երիտասարդ Գերմանիան»
ոչ թէ երազելով է գրաւվում, այլ կեանքին
եւ ժամանակակից եւտն պահանջներին է ծա-
ռայեցնում իր գրիչը: Այնուհետեւ յաջորդա-
բար առաջ են գալիս ընդհատական եւ նա-

բժիշկ, որովհետեւ պարտաւորութիւններ չառ
կան Այնուհետեւ Կիկոճէ պատմեց գիւղերի
մասին մի քանի տեղեկութիւններ, որոնց մէջ
նա հաստատեց նախկին տեղեկութիւնները:
Շատ թէ քիչ վնասված գիւղերի թիւը բժիշկը
համարում է 21:

Մասնագիտով, լսելով այդ զեկուցումը՝ որո-
շեց 1) ինչերը, որ բժիշկ Ուսպենսկի թողնելի
Ախալքալաքում դարձեալ մի ատժամանակ. 2)
հրաւիրել մի նոր բժիշկ առնուազն երեք ա-
միս ժամանակով, յատկացնելով նրան ամսա-
կան 300 ռուբլի ոսոթի եւ ճանապարհածախս.
3) պատուիրել հիւանդների, որրերի, մանուկ-
ների համար բաւականաչափ ձեռնակեղնի եւ
վերանայնի:

Ախալքալաքի կոմիտէտը յայտնել էր, որ գիւ-
ղացիները չը նայելով այն հանգամանքին, որ
նրանց համար նշանակված է 30 կօպէկ օրա-
վարձ՝ չեն ցանկանում աշխատել եւ փրատա-
ների տակից դուրս հանել անասուններին: Մօտ
3000 մարմին պէտք է այրել եւ հողի մէջ թա-
ղել իսկ աշխատաւորներ չեն երեւում: Մա-
նագիտովը աչքի առաջ ունենալով, որ գիւ-
ղացիների համար դժուար է աշխատելը կը-
կաշարժի չըջանում, թէ ապահովել փանդի
պատճառով, թէ պատրաստ հացի եւ կերակրի
եւ թէ ապահով բնակարանի բացակայութեան
պատճառով՝ որոշեց առաջարկել տեղական մա-
նագիտովին հետեւեալը. 1) բանտրներից խումբ
խումբ միացնել, առանձին համայնքներ կամ
արտիկներ կազմելով, 2) հողալ նրանց համար
ունենալու պարտատ հաց եւ կերակուր, 3)
հողալ գիւղերու տեղ, 4) աւելացնել օրավարձի
գործին 40—50 կօպէկ եւ աւելի, նայած
անհրաժեշտ է հանգամանքներին, եւ 5) ունենալ
տները քանգելու ժամանակ վերահսկողներ
ճարտարապետներին:

Երկրաշարժի առաջին ուժեղ ցնցումներից եւ
գիւղերի կործանվելուց յետոյ գիւղացիները փա-
նան հարեան գիւղերը եւ տարան իրանց ա-
նասուններին այնտեղ, յոյս ունենալով, որ
այսիկով կը կրեն խոտը քանգված գիւղերից
իրանց անասունների մօտ: Սակայն փորձը
ցոյց տուեց, որ այդ եղանակը շատ թանգ է
նստում եւ գիւղացիների համար կատարելա-
պէս անհեռնաւոր է: Այդ պատճառով վերջին
ժամանակները գիւղացիները վերադարձել են
իրանց անասուններին քանգված տների մօտ
եւ այդտեղ կերակրում են խոտով եւ դարմա-
նով: Այդ հանգամանքը եւ տների մէջ մնացած
գործերը պահպանելու ցանկութիւնը ստիպում
է գիւղացիներին պահել ամեն մի տան վրա
մի մի պահանջ, որոնք գիւղերում են կամ
իրանց հին տները՝ ամբողջ մնացած մասե-
րում, կամ պատասպարվում են վրանք եւ ռւււււ,
որոնց մեծ պահանջ է զգացվում այժմ այդ
տեղերում: Որքան եւ աշխատում են համոզել
գիւղացիներին, որ նրանք չը մնան փրատա-
կների չըջանում, չը քնել տներում՝ անկողնի է
լինում աղբի նրանց վրա. իւրաքանչիւրը մը-
տածում է իր գոյքը փրկելու եւ իր պատրաս-

տութիւնական ուղղութիւնները: Մեքենա-
ների եւ տեխնիկայի դարձ բնաւաւար պէտք
է առաջ բերէր մի ժողով ընդհատական աշ-
խարհակարգը.—Գէթեի չըջանին յաջորդում
է Բիսմարկի չըջանը. չոր, գործնական, շահա-
խնդիր է այս չըջանի մարդը. նրա բարոյա-
կանութիւնը եւ առաքելութիւնը ոյժն է
միայն. նա ոչ երազների աշխարհից եւ ոչ պա-
տոնական սկզբունքներից է խօսում: Նրան
երեք-չէ հետաքրքրում այն հարցը, թէ մարդս
ինչպէս պէտք է լինի, այլ թէ ինչ է նա. ոչ
սէր, ոչ եղբայրութիւն եւ ոչ մարդասիրու-
թիւն է քարոզում նա. ով որ նրան օգնէ՝ նա
ձեռք է մեկնում նրան, ով որ զրկէ եւ հար-
ուածէ՝ փոխադարձ կը ստանայ: «Դոյութեան
կրօն» իրրեւ մի ձակարակական ծանրու-
թիւն քարացած է այս ընդհատ մտածողի ու-
սերին, եւ նրա կենտրոնական նպատակն է նիւ-
թական բարիքների ձեռք բերել—ապրել եւ
ասպարէզը գործելին է, լինի դա մի ազգ թէ
անհատ. թէ մէկի եւ թէ միւսի համար իրրեւ
կուրի առաջնակարգ զէնք քաղաքականութիւնն
է, «Նարատարութեան արուեստը»—ինչպէս ա-
նուանում է այս արուեստի հանճարեղ վար-
պետներից մէկը, Բիսմարկ եւ մինչդեռ բարոյ-
ազէտ պահանջում է «ցանկալին» (ընդհանուր
բարոյական տեսակէտից)՝ քաղաքազէտ աշխա-
տում է իր տրամադրութեան տակ եղած մի-
ջոցներով նստաւոր, կարելին ձեռք բերել:

Սա այն չըջանն է, որ փորձական գիտու-
թիւնները արագ կերպով ծաղկում են—ընա-
կան գիտութիւնները, պատմութիւն, հասա-
րակական գիտութիւնները, հոգեբանութիւն եւ

տաճ խոտի գէղերի եւ դարմանի պաշարների
պահպանութեան մասին:
Հետեւեալ համարում կը հաղորդենք մասնա-
ժողովի մէջ տեղի ունեցած միւս հետաքրքրի
զեկուցումների մասին:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք երկրաշարժից վնասված գիւղացի-
ների օգտին հետեւեալ նուէրները.

Ախալքալաքից 1) Հալիբար Արարեանից 3
ր., 2) տ.տ. Շուշանի Գրիգորեանից եւ վե-
րնիկա Գրիգորեանից 15 ր. 95 կ., որ նրանք
հաւաքել են զեկուցողների 31-ի գիշերը «Մուշկ
Ալեյուրա» ման գալով. նուիրատուներն են. տ.տ.
Գ. Գրիգորեան, Շ. Գրիգորեան, Վ. Գրիգո-
րեան, օր. Մ. Գրիգորեան, տ. Շ. Գրիգորեան,
պաշան, օր. Ս. Գրիգորեան, տ.տ. Ա. Բէ-
ժանեան, Վ. Դոյուքեան, Փ. Մորոզեան, Վ.
Յարութեան, Ն. Բէժանեան, Թ. Ալեքսա-
նեան, Երիցունի Մ. Տէր-Կարապետեան 1-ական
րուբլի: Օր. Ա. Բէժանեան, տ.տ. Մ. Միմէ-
նեան, Ս. Շելլերեան, Տ. Յարութեան 50-ա-
կան կօպ., տ. Ա. Պապոսեան 30 կ., Գ. Սու-
րանանեան 25 կ., օր.օր. Մ. Բէժանեան, Ա.
Բաղդասարեան 20-ական կօպ.:

Վերին-Աղդան գիւղից (Ղազախի գաւառ),
Յ. քահ. Ստրիկեանից 37 ռուբլի, որ հաւաք-
ված է գիւղի հասարակութիւնից. նուիրատու-
ներն են. Յ. քահ. Ստրիկեան, ուսուցիչ Յա-
րութեան, օր. Շ. Յարութեան, Ս. Յա-
րութեան, Մի հարաւորեան, Ս. Դովլաթբե-
կեան, Ա. Դովլաթբեկեան, Յ. Յարութեան
1-ական ր., Յ. Մարտիրոսեան, Ա. Ոսկանեան
90-ական կ., Լ. իսախան 80 կ., Յ. Ստե-
փանեան, Գ. Նալբանդեան, Ս. Յարութեան,
Յ. Նալբանդեան, Գ. Անտոնեան, Յ. Իսխա-
նեան, Ա. Բալիսեան, Թ. Բաղդասարեան
60-ական կ., Ս. Մեհրաբեան, Դ. Մէլիքսէթեան
55-ական կ., Դ. Մանուչարեան, Ա. Իսխա-
նեան, Յ. Աղաբալեան, Ս. իսախան 50-ական
կ., Յ. Արզումանեան, Համայնեցի 40-ական
կ., Մ. Բէգեան, Ս. Ստրիկեան 35-ական կ.,
Մ. իսախան, Մ. Մեհրաբեան, Ս. Մեհրա-
բեան, Գ. Պաշանեան, Ա. Ստրիկեան, Թ. Փո-
քալեան, Ս. Բէգեան, Ս. Զանիսեան, Ս.
Բաղդասարեան, Մ. Արզումանեան, Վ. Մովսիսեան,
Յ. Յովսէփեան, Թ. Մարտիրոսեան, Բ. Սկեան,
դարեան, Յ. Յովսէփեան, Ա. Դարապետեան,
Ս. Յովսէփեան, Մ. Դովլաթբեկեան, Յ. Մար-
տիրոսեան, Յ. Դանիէլեան, Բ. Դանիէլեան,
Դ. Միխայիլեան, Գ. Աղաբալեան, Օ. Էլեա-
րեան, Ս. Գէորգեան, Ս. Յովսէփեան, Դ. Դա-
նիէլեան 30-ական կ., Յ. Դուչեան 25 կ.,
Կ. իսախան, Դ. Տ.—Մէլիքսէթեան, Յ. Գրի-
գորեան, Պ. Բաղդասարեան, Կ. Մարտիրոսեան,
Ա. Դուչեան, Մ. Արզուման, Յ. Յարութեան,
Ս. Սկեանդարեան, Դ. Մարտիրոսեան,
Յ. Մարգարեան, Ա. Արզումանեան, Ա. Պա-
պոսեան, Յ. Մանուչարեան, Գ. Մարտիրոսեան,
Ե. Էլիքեան, Ս. Բէգեան, Ս. Մարգարեան,
Գ. Գրիգորեան, Յ. Գաւապեան, Ա. Փոքա-
լեան, Յ. Մեքեմեան, Ս. Ներկարարեան, Ս.
Բէգեանեան, Վ. Մարգարեան, Մ. Ստեփանեան,
Մեհ. Ստեփանեան, Յ. Պօղոսեան, Ս. Բէգե-
նեան, Շ. Յովսէփեան 20-ական կ., Ե. Պե-
տրոսեան, Ս. Դովլաթբեկեան, Պ. Դովլաթբե-
կեան, Թ. Էլիքեան, Մ. Արզուման, Բ. Ար-
նեան, Գ. Յովսէփեան, Դ. Ներկարարեան,
Ս. Ստեփանեան, Բ. Յարութեան, Ա. Զա-
քարեան 15-ական կ., Կ. իսախան, Ա. Մա-

այն: Փրիստիպալութիւնը տեղի է տալիս փորձ-
նական գիտութիւններին եւ բնագիտութիւնը
Ֆիզիկական Բնութիւնը տիրել եւ ճանաչել—
անա ընդալիստ փրատը նպատակը. աշխարհի
եւ մարդկանց ծագումը, զարգացումը հասկա-
նալ, պատճառական յարաբերութիւնների եւ
օրէնքների վերածել—մի խօսքով ընդհանուր
եւ մասնաւորի մէջ եղած օրգանական կապը
գտնել:

XVII դարի աշխարհակարգով անհատը մի
փոշի էր, որ «տրամաբանական անհրաժեշտու-
թեան» եւ «բնական օրէնքի» հակադրական տե-
ղանի առաջ պէտք է գտնվէր. իսկ XIX դարը
մի նշանաւոր գիւտ է անում—էվոլյուցիոնական
—պատմական սկզբունքը, որից եւ անհատը
իր ինքնորոշութեան պատմականը եւ կա-
ռուցանում Բազմազանութիւն, իրրի յարաբե-
րութիւնները, դարգացում—անա այն
սկզբունքը, որի առաջ հին աշխարհակարգը
միանգամայն փչրվում է. «բացարձակ» բան
նրա համար կարծես այլ եւս գոյութիւն չունի
այլ ամեն ինչ յարաբերական է: Այս է պատ-
ճառը, որ Կանտի «Kategorische Imperativ»-ին
«պէտք է»-ին նոր անհատը պատասխանում
է ուրիշ կերպ չեմ կարող: Թէ բարոյական
թէ կրօնական եւ թէ էսթետիկական կանոն-
ները նրա համար ոչ մի նշանակութիւն չու-
նեն—այս բոլորը նա համարում է վերացական
անբովանդակ. նա ընդալիստ է մինչեւ ոսկոր՝
ների ծուծը:

(Կը շարունակվի)

նապատվությունը կը մատուցանէ գերմանական արդիւնաբերութեան եւ չինարարութեանը:

— Բիւջէի առաջ, ինչպէս ասում է «Times»-ը, Միացեալ-Նահանգներէ ծովային միջնորդը նոր պայթուցիկ նիւթի փորձեր էր կատարում: Այդ նիւթը կոչուում է «մարսիա»: Երեւեցաւ, որ մարսիան աւելի զարհուրելի է, քան լիզգիտը եւ աւելի անվտանգ նրանից: Մարսիոյ վրա ազդեցութիւնն չեն գործում ոչ չողը ոչ գուրտը, նա չէ պայթում մի հարուածից: Մարսիոյ գործն է ամբողջ երկարական ուժի օգնութեամբ միայն:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ

12 յունվարի

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ: Թէոդորայի գաւառում երեւացել է բաւար տիֆի հիւանդութիւն: Հիւանդացի են երեք գաւառական բժիշկներ: Նահանգական զենամուկի վարչութեան կարգադրութեամբ, ուղարկված են գաւառական բժիշկը եւ մի ֆելդշեր:

ԼՕՆԴՈՆ: «Բէյտէրի գործակալութեան» հեռագրի մէջ, որ ստացվել է բոքսիթի վերին Տուգելի մօտ գտնուող բանակից, յունվարի 9-ից, հաղորդված է, թէ նրանից յետոյ, երբ Բոտան չարթի օրը առաւօտեան արդեւ եղաւ բրիտանացիների շարժմանը դէպի առաջ՝ ենթադրութիւն ծագեց, թէ երկուշաբթի օրից սկսած թշնամին անգործ կը մնայ: Բայց չարթի օրը, ցերեկով, մի քանի նշաններ ի նկատի առնելով, անգլիացիների հիւսիսային բանակում եկան այն համոզման, թէ նոր յարձակումն է պատրաստվում: Բոտան եւ Կրօնիէ գտնվում էին բարձր բլուրների վրա, որոնց յետեւից անցնում է Լէդլիմիթի ճանապարհը: Մատուցելի հրացաններից արձակված կրակը զբոխային աղմուկ էր բարձրացնում, բայց գիշերվա վրա համեւում հետ կոխը դադարեց: Լուսաբացին երեւաց, որ անգլիացիները զգալի կորուստ են ունեցել: Բոքսիթի կողմից ընկել էր մի ֆելդշեր: Ուղարկուած մօտ գտնվող անգլիական զինքերի կենտրոնից, այնտեղ, ուր բլուրների վրայով մի այլ ճանապարհ է գնում դէպի Լէդլիմիթ՝ անգլիացիները առաջ գնացին այն ցածր բլուրներով, որոնք ձգվում են Տուգելայի երկարութեամբ: Նրանք անարգելք հասան այս եւ այն կողմը ցրված բլուրների երկրորդ շարքին, բայց երբ ընկան թշնամու Մատուցելի հրացանների կրակի տակ՝ ստիպված եղան կտրուկ անգլիական զինքերի կենտրոնից: Մտադրեցին իրանց սպանվածներին եւ վիրաւորվածներին: Զօրաբանի հրամանատար վիլյոնը վաղը ընկաւ, մօտից թռչող լիզգիտի ուղիղ ուղարկված, բայց չուտով ուղիք եկաւ:

Վերին Տուգելայի վրա գտնվող բոքսիթի բանակից յունվարի 7-ին ստացված հեռագրով հաղորդվում է, թէ բրիտանական հետեւակ զորքից 1000 մարդ, մի բաւարեւոյով, չորեքշաբթի օրը առաջ գնացին Տուգելայի այս կողմից, ցածր բլուրների երկրորդ շղթայով, որ ձգվում է բոքսիթի զինքների եւ գետի մէջ տեղում: Հետեւակ զորքի առաջ գնալու ժամանակ, անգլիացիները սաստիկ կրակ էին թափում թշնամիներից, բայց բոքսիթը անապատման լուծիւն էին պահպանում: Ըստ երեւոյթի զաւաղեցրեց անգլիացիներին, որովհետեւ նրանք այլ եւս առաջ չը գնացին, իսկ հետեւեալ առաւօտեան երեւաց, որ նրանք նոյն իսկ յետ են գնացել դէպի իրանց նախկին զինքներ:

Բուլլերը յունվարի 11-ին, երկուցեան 6 1/2 ժամին, հեռագրում է Սպիրմանսկոյի բանակից, թէ Ուորթընը գտնվում է այն զինքի վերա, որ նա գրաւել է յունվարի 9-ին: Մտաւարապէս 1,400 խաղ նրա զինքից հեռու գտնվում է թշնամու զինքը, որ աւելի բարձր է քան Ուորթընը, ուստի եւ անհնար է յարձակվել նրա վրա: Ուորթընի գրաւած լեռնային գագաթներն այնպիսի թիւք լանջեր ունեն, որ հնարաւորութիւն չը կայ թշնամիները բարձրացնել նրանց վրէժը: այս պատճառով թռչնամուկ զինքները մնալով ուղիղ են գնում: Բայց երբ տեղաւորված են զորքի յետեւում աւելի ցածր տեղերում: Այս թշնամիների մենամարտութեան մէջ զերազանցութիւնը մեր կողմն է, որովհետեւ, ըստ երեւոյթի, թշնամին աշխատում է թագնել մարտիկներին յետեւում:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Բոլոր պետութիւնները, որոնք մասնակցում էին Չինաստանում բաց գոնիերի քաղաքականութիւնը պահպանելու բանակցու-

թիւններին՝ ուղարկեցին արտաքին գործերի միջնորդութեանը հեռագրներ, որոնցով աւերակեցին առեւտրին խոտանում են այդպիսի «բաց գոնիեր»: Պաշտօնական խոտանումներ չեն ստացված միայն Իտալիայից եւ Եւրոպայից, բայց ուղարկումը բացատրում են նրանով միայն, որ այդ երկրները պատրաստ չեն:

13 յունվարի

ՄՕԴԴԵՐ-ՐԻՎԷՐ: Կիմբլիքից ստացած տեղեկութիւնները համաձայն բօքսիթի նորից սկսեցին ետանգուն կերպով ուղարկուել քաղաքը: ԼՕՆԴՈՆ: Նաուալի երկաթուղային կամուրջը, տօնակը Լէդլի-Նեկայի մօտ եւ դէպի Օրանսիան հանրապետութեան տանող երկաթուղու կամուրջը աւանաւորած են, ուստի եւ բօքսիթը ամեն մի քաղի կարող են կործանել նրանց, երբ հարկաւոր լինի յետ նահանջի:

«Times»-ը ասում է, թէ մինչեւ հիմա չէ երեւում, թէ Ուորթընը հասել է գլխաւոր զինքին կամ թէ որեւէ լուրջ ընդհանրումն է ունեցել: Բօքսիթը ժամանակ ունէին իրանց զինքերը բերել մարդիկ, թշնամիներ, ռազմաւորներ եւ պաշարներ: Մինչեւ որ բօքսիթի զինքները չաւանդեն եւ նրանց պաշարները չը յաղթվեն ու չը ոչնչացվեն, Լէդլիմիթի աղաւթում չէ կարելի աղանդել համարել:

Լիւսաբոնից «Daily Mail»-ին հաղորդում են, թէ պորտուգալական կառավարութիւնը Լօրէն-ցօ-Մարկիէից պաշտօնական տեղեկութիւն է ստացել, թէ բօքսիթը խախտեցին չէզոքութեանը եւ զօրքով Ուլիսից Ռօզելիս անցան պորտուգալական երկրի մէջով:

ԼՕՆԴՈՆ: Լօրէնցօ-Մարկիէից հեռագրում են, թէ Օլիվերիսկոյի մօտ տեղի ունեցած պատերազմում բրիտանական զորքերը ծանր կորուստներ ունեցան, այն ինչ բօքսիթի կողմից սպանված է մի մարդ եւ վիրաւորված են երկուսը միայն: Բոտան ստանձնեց զօրքերի զբաւումը: Նրանք հրամանատարութիւնը, իսկ Կրօնիէն այլ պաշտօն ստացաւ: Մտադրեցին հիւսիսային բանակում չլիթութիւնն է տիրում: զօրքերն աննպատակ չըլում են երեւան այս, երբեմն այն կողմը:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ՔԱՆԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԳՆՈՅՆՈՅ
Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուլիս, Վօրոնցովի արձանի հանդէպ)
ԱՄԵՆՈՐ, ԲԱՅԻՔ ԿԻՐԱԿԻՐՈՐԵՐԻՑ:

Ա. Ա. Նաւասարգեան—11-12 ժ. վիրաւորութեան, վերնախոս (սիֆիլիս) եւ միգրանտ հիւանդ:

Կ. Մ. Զիլիովանի—9-10 ժ. աչքի, ներքին եւ արտաքին:

Զ. Բ. Բարսեղեան—11-12 ժ. կանանց եւ երեխայից հիւանդ:

Բ. Պ. Պրօսպեյի—12-1 ժ. ականջի, կոկորդի, քթի եւ կրծքի:

Ս. Պ. Կարապետեան—1-1 1/2 ժ. ներքին եւ երեխայից:

Ա. Գ. Գուրկո—1 1/2-2 ժ. ներքին:

ԵՐԵՎԱՆԵՐԸ
Բ. Պ. Պրօսպեյի—5-6 ժ.
Բ. Մ. Զիլիովանի—6-7 ժ. ներքին (կրծք-տարածութիւն), վերնախոս եւ մարմնի:

Բ. Ա. Նաւասարգեան—7-7 1/2 ժ.
Վ. Մ. Մալիկովան—քիմիական եւ խոշորացուցական հետազոտութիւն մէջի, խիստ եւ արեւմտ:

Վար 50 Կ. Զարաթիկը ձիւն համաժողովի (կօն-սիլիումի) եւ օպերացիայի համար աստիճան:

Օ. Տ. Առվանիսկի—տանը, ծաղկահատ եւ բժշկական մարմնամարդ. դիմել 11-1 ժ.:

Հիւանդանոցի վերահսկող
74-150 Բժօկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

ՅՈՒՆԻՑԱՆԴԻՍԻ ԶԱՆԴԻՍԻ ԶԱՄԱՐ
5000 հատ 70-900 թւականների Պարսկաստանի զանազան նամակադրոշմներ ունեւ. ցանկացողը դիմէ «Մշակի» խմբագրութեան: 2-5

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ
«ՄԻ ԶՆՈՐ»
(Посредник)
Դ. Ի. ԵԱԿԻՄՈՎԻՉԻ
Պուշկինեան պատած, Թամաշկին քարավան-սարայի հանդէպ:
Հրաւիրում է պ.պ. տանտէրներին հաղորդել մանրամասն հասցէ ազատ բնակարանների (քրա համար վերջնական է 20 կօպ.), որ շատ դիւրութեան կը պատճառէ թէ տանտէրներին եւ թէ բնակարան վարձողներին: Այդ նպատակով պատրաստված է մանրամասն ցուցակ: Գրասենեակում կայ ազատ բնակարանների մեծ ցուցակ: Ծանկացողները թող դիմեն գրասենեակ:
№ 1. 0-2

ՄԱՆԿԱՐԱՑՈՒՄԻ ՄԱՍՍԱԺԻՍՏԱԿԱՆ
ՕՐԻՈՐԴ ՆՈՐԵ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳՕԼՕՇԱՆԻ:
Հ. Ե. Կրասնոգորսկայա թ. 14. 11-20

Լ Է Օ
ՄԵԼԻՔԻ ԱՂԶԻԿՐ
պատմական վեպ, 753 էրես.
(Մնացել են սակաւթիւ օրինակներ)
ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 30 ԿՕՊԵԿ
Դիմել Թիֆլիս, «Մշակի» խմբագրութեան:
3-10

ԴԵՊՈ ԶԵՐԱՄԻ ՍԵՐՄԻ
Դեղին եւ սպիտակ կօկօններից, հետեւեալ ֆիրմաների՝
ԱԼՕՐԶԻ եւ ԸՆԿ., ԱԼՕՐԶԻ, ԲԵՐՏԷ եւ ԸՆԿ., ՖԵՐՐԱՆ:
Բոլոր տուփերը հինգ-հինգ մսխարանց են, բանդերով եւ կնքված Թիֆլիսի չերամպա-հական կայարանի զմուռի կնքով:
Ծանկացողները կարող են դիմել Օ. Գ. Բա-րեկենդանեանից, «Պակէ» ընկերութեան գործա-կալին, Սիօնի փողոցի վրա, Մայսուրաձէի եւ Խօջախարուի քարավանատարայում: 3-5

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆԵԱՐԻ 16-ԻՆ
Թիֆլիսի ժողովարանի դահլիճում յօդուտ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Կը կայանայ
ՊԱՐԱՀԱՆԴԵՍ
Կօմիթօնով: Դահլիճում կառուցած կը լինի «Բօյաների վրան» երկաթուղային գուշակողով: Պարտները պէտք է լինեն ֆրանկով: Սկիզբն է երկուցեան ժամը 9-ին: Մուտքը—2 ռ. 10 կ. (չ. հ. չ.) 3-3

ՆՈՐԻՆ ՄԵՏՈՒԹԻՒՆ ՊԱՐԱՅ ՇԱՀԻ
պալատի հայթայթողներ
ԹԵՅԻ ԱՌԵՏԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Վ. ՎԻՍՕՅԿԻ եւ Ընկ.
Մօսկվայում.
ԲԱՅՎԱՍԷ Ե. Ն. Տ. ՅՈՒՆԵԱՐԻ 1-ից ԲԱՅԱՄՈՒՆԻՔ
Թիֆլիսում
Մայրան, տ. Գ. Ե. ԲԱՅԱՄՈՒՆԻՔ
Ընկերութեան թէյը ծախու է գտնվում բոլոր լաւ մազապիւններում:
3-20

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ Ջեռնալի առեւտրական եւ գործարանական հաշուապահական
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Ներսէս սեփականացող 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս եւ բաշխարարելով, եւ եղած դէպքերում լանձն է առնում պաշտօնի առաջարկել:
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՎԱՆՆԵՐ:
Ա) Կրկնակի խաղական հաշուապահութիւն ըստ ամսական առեւտրական ձևերի, հանդիս է նախաին արդիւնաբերական եւ կերտնի գործարանական հաշուապահութեան:
Բ) Առեւտրական խաղարանութիւն:
Գ) Առեւտրական նամակագրութիւն:
Դ) Դեղագրութիւն եւ ամենալատ ձեռքերի ուղղելը:
Պարագրամները սկսվելու են 1900 թ. յունվարի 15-ից, ճաշից յետոյ, եւ պարբերաբար շարունակվելու են խաղարանի 2 ՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարագրամները:
Ծանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչեւ 6 ժամ երկուցեան, Ս Օ Լ Օ Լ Ա Կ, Սերգիլիսկայա փողոց, տուն Լիւիցեանի, № 20:
Վերջիւնով հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Տեղիւնակի մօտ, եւ Ռուսաստանի բոլոր յարմիր գրաւաճառանոցներում: ԳԻՆԸ Է 3 ռ. 50 կօպէկ: Օտա-րաքաղաքացիները զիջել գնելու համար կարող են դիմել Տեղիւնակին, առանց պատի ծախս վճարելու:
9-20

Фабрика карандашей **A. W. FABER** Основана 1761 г.
Всё произведенія этой издавна известной фабрики снабжены утвержденным Правит. фабричным КЛЕЙМОМЪ A. W. FABER или A. W. F., или A. B. ФАБЕРЬ
на что во избежание ошибок, ПРОСИМЪ ОБРАЩАТЬ ВНИМАНИЕ
10-30 131559

Պատրաստում ենք եւ ցանկացողներին ուղարկում ամբողջ Կովկասում ամենայայտնի Գանձաարի վաճիք քարահանքից ամենաընտիր տեսակի ՀԱՐԱՐԱՎԻ:
Ջ Ր Ա Վ Ս Ք Ր Ե Ր
մատչելի գներով եւ զանազան մեծութեան:
Մեր հասցէն. Евлахъ, контора Меликъ-Пашаянъ.
Որովհետեւ վերջերս երևացել են նաեւ ուրիշ հանքերի քարեր, որոնք յատկութեամբ շատ ցածր են կանգնած, ուստի խնդրում ենք ցանկացողներին դիմել միմիայն մեզ:
Քարահանքի կապալաւոր՝ Արքաճառ Հասան-Ջալալեանց
25-40